Ա փուլի Դասախոսություն 01:

Դասախոսություն 01

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ ՔՏ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ:

Ինքն իրեն ճանաչել նշանակում է հասած լինել նույնության իր սեփական Աստվածային էակի հետ, իմանալ, որ ինքը նույնական է իր սեփական Ոգուն, անմիջականորեն վերապրել ճանաչվածի և ճանաչողի միջև նույնացումը: Հենց դա է, որ մենք կարող ենք և պետք է սահմանենք որպես Ինքնաճանաչում:

Կյանքում հիմնականն իրապես ինքն իրեն ճանաչելուն հասնելն է. **որտեղից ենք գալիս, ո՞ւր ենք գնում, ո՞րն է գոյության նպատակը, ինչի՞ համար ենք ապրում, և այլն, և այլն, և այլն:**

Անշուշտ, ինքն իրեն ճանաչելը հիմնականն է. բոլորը կարծում են, թե ճանաչում են իրենք իրենց, մինչդեռ իրականում իրենք իրենց չեն ճանաչում: Ուստի անհրաժեշտ է հասնել իրենք իրենց լիակատար Ճանաչմանը. և սա պահանջում է անդադար **Ինքնադիտարկում**, մենք պետք է տեսնենք մեզ այնպիսին, ինչպիսին կանք:

Ցավոք, մարդիկ հեշտությամբ խոստովանում են, որ ֆիզիկական մարմին ունեն, ընդունում են, որ ունեն այն, որովհետև կարող են տեսնել այն, շոշափել, սակայն նրանց հոգեբանությունը փոքր–ինչ այլ է:

Անշուշտ, քանի որ չեն կարող տեսնել իրենց սեփական հոգեկանը, քանի որ չեն կարող դիպչել կամ շոշափել այն, նրանց համար դա ինչ-որ անորոշ բան է, որը չեն հասկանում: Երբ որևէ մարդ սկսում է դիտարկել ինքն իրեն, դա աներկբա նշան է, որ նա փոխվելու մտադրություն ունի:

Ով իսկապես ցանկանում է ճանաչել Երկիր մոլորակի, արեգակնային համակարգի կամ այն գալակտիկայի «Ներքին Աշխարհները», որտեղ ապրում ենք, նախ պետք է ճանաչի իր ներաշխարհը, իր անհատական ներքին կյանքը, իր սեփական «Ներքին Աշխարհները»:

«Ճանաչի՛ր ինքդ քեզ, և կճանաչես Տիեզերքն ու Աստվածներին»:

Մեզանից յուրաքանչյուրն ունի իր սեփական Աստվածային Իմաստությունը, որն իր Իրական Ներքին Էակինն է:

Գիտենք, որ Աստված ամենուր է: Բայց **ճանաչում ենք Աստվածության մեր սեփական մասը:**

Մենք երբեք ժամանակ չենք ունենում մեր ներքին աշխարհը ճանաչելու համար: Դրան բավարար կարևորություն չենք տալիս: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է այս աշխատանքը կատարել գիտակցաբար:

ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԿԱՋՄՎԱԾ ԵՆՔ ԵՐԵՔ ՄԱՍԻՑ.



Նյութ. մեր ֆիզիկական Մարմինը կամ մարդկային մեքենան: Մենք ունենք այն, բայց դա միակ բանը չէ, որ մենք ենք:

Նյութից — ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ — Մարդկային Մեքենա:



Հոգի կամ Միտք. բանտարկված էության 97%–ը՝ Հոգեկան էներգիան, որը ծնում է մեր բոլոր շարժումները և որը մենք չենք ճանաչում, չնայած որ շատ ավելի երկար ենք ապրում ներքին աշխարհում, քան արտաքին աշխարհում: Այստեղ ենք գտնում մեր լինելու բոլոր տարբեր ձևերը՝ մեր թերությունները:

Էներգիայից — ՀՈԳԻ ԿԱՄ ՄԻՏՔ — Բազմակի Հոգեկան:



Ոգի կամ Գիտակցություն. ազատ և գիտակից էության 3%-ը՝ մեր Աստվածային Իմաստությունը: Իրականը, Ճշմարիտը, Հավերժականը կամ Անմահը, յուրաքանչյուրիս Ճանաչողը, այն, ինչը ժամանակինը չէ և երբեք չի անցնում:

Լույսից — ՈԳԻ ԿԱՄ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ — Իրականը, Ճշմարիտը և Հավերժականը

Ներքին Գիտելիքին հասնելու համար մենք պետք է ուսումնասիրենք Իմաստության Չորս Սյուները, որոնք թույլ կտան մեզ դանդաղորեն թափանցել այն ներքին աշխարհի մեջ, որը «սեփական անձ» է կոչվում:

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՉՈՐՍ ՍՅՈՒՆԵՐՆ ԵՆ.

ԳՐՏՈՒԹՅՈՒՆ.

Փորձարարությունը Գիտակից Գիտության հիմքն է: Գիտությունը մեզ սովորեցնում է տարբեր ընթացակարգեր, որպեսզի կարողանանք ճանաչել մեր ներքին աշխարհը և այն անմիջական ձևով վերապրել:

«Գիտելիք» բառը ծագում է «գիտենալ»–ից, ոչ թե «հավատալ»–ից: Պրակտիկայի միջոցով կարող ենք անմիջական ձևով վերապրել բնության տարբեր Չափումները:

Մենք ուսուցանում ենք հետևյալ պրակտիկաները.

Կենտրոնացում և Թուլացում

Աստրալ Ելք

Մեդիտացիա

Անցյալ կյանքերի հետահայացք

Կարմա և Դհարմա

Պրակտիկան է ստեղծում Վարպետին, ուստի պետք է պրակտիկայով զբաղվենք, մինչև որ հաղթենք:

ԱՐՎԵՍՏ.

Արվեստը մեզ սովորեցնում է Ստեղծել: Թե ինչպես ստեղծենք ինքներս մեզ: Սեռական կենտրոնում թաքնված են մարդկային էակի մեծ հնարավորությունները:

Գերսեռականությունը կամ Բարձրագույն Սեռականությունը մեզ թույլ է տալիս ստեղծել էակի Բարձրագույն Գոյութենական Մարմինները, որպեսզի կարողանանք ներկայացվածություն ունենալ բնության տարբեր Չափումներում:

Սա ձեռք է բերվում տղամարդու և կնոջ սեռական միության միջոցով՝ արական ֆալոսի ներմուծմամբ իգական յոնիի մեջ, առանց Ստեղծարար Սեռական Էներգիայի կորստի:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ.

Մեր ներսում շատ մարդիկ են ապրում, մենք երբեք նույնական չենք: Երբեմն մեր մեջ դրսևորվում է մի ժլատ մարդ: Այլ դեպքերում՝ մի դյուրագրգիռ մարդ:

Որևէ այլ պահի՝ մի առատաձեռն, բարյացակամ մարդ. ավելի ուշ՝ մի սկանդալային կամ զրպարտիչ մարդ. հետո՝ մի սուրբ. ապա՝ մի ստահոս, և այլն:

Մեր էներգիան ներդրված է մեր թերություններից յուրաքանչյուրի մեջ. մենք մարդ–մեքենաներ ենք, պարզապես խամաճիկներ՝ անտեսանելի թելերով կառավարվող: Մենք զուրկ ենք իսկական Անհատականությունից, յուրաքանչյուր թերություն շարժվում է տարբեր ուղղությամբ, մենք երբեք նույնը չենք:

Երբ լրջորեն ինքնադիտարկում ենք ներքին աշխարհը, զարմանում ենք այդքան շատ թերությունների վրա: Մեր թերություններից յուրաքանչյուրը մի այլ մարդ է:

ԲԱՆՏԱՐԿՎԱԾ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Թերություններից որևէ մեկը վերացնելիս ազատագրվում է այն Գիտակցությունը, որը նա բանտարկված էր պահում: Եսերից յուրաքանչյուրի Մահով մենք վերագտնում ենք նրա մեջ փակված Իմաստությունն ու Սերը: Այս կերպ ազատագրված կայծերն աստիճանաբար միաձուլվում են ազատ Գիտակցությանը:

Գիտակցության ազատագրման Մեթոդ.

1- **Դիտարկել ինքներս մեզ** ամեն պահ, որպեսզի կարողանանք հայտնաբերել այն տարբեր թերությունները, որոնք դրսևորվում են մեր մեջ:

2- **Հայտնաբերված թերությունը** պետք է դատի ենթարկվի մինչև այն հասկանալը:

3- Հասկացվելուց հետո **այն պետք է արմատախիլ արվի** մեր սեփական Աստվածային Մորն ուղղված վերացման Աղերսի միջոցով:

a. Այս պարզ ընթացակարգով մենք կարող ենք աստիճանաբար փոխել մեր լինելու ձևը՝ վերացնելով մանրուք առ մանրուք: Եվ ազատագրել թերություններից յուրաքանչյուրի մեջ բանտարկված Գիտակցությունը: Այս գործընթացը կոչվում է **Մահ շարժման մեջ:**

ՄԻՍՏԻԿԱ.

Միստիկան մեզ սովորեցնում է սիրել աշխատանքը՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին:

Մարդը սկսում է ճանաչել ներքին աշխարհը, երբ սկսել է փորձարկել. ստուգել իր սեփական անհատական էակի իրականությունը:

Թե՛ Մարմինների Ստեղծման աշխատանքում, թե՛ թերությունների քայքայման և հանուն Մարդկության Զոհաբերության մեջ անհրաժեշտ է դառնում զարգացնել սերն աշխատանքի հանդեպ՝ հանուն բուն աշխատանքի: Եվ սա ամենադժվար բաներից մեկն է՝ վերը նկարագրված այն վիճակի պատճառով, որում մենք գտնվում ենք:

Երբ զարգացնում ենք անշահախնդիր Զոհաբերությունը հանուն Մարդկության, սկսում ենք զգալ Սեր նրա հանդեպ, թրթռում ենք Սիրո հրաշալի ուժով և վերապրում ենք մի շատ կարևոր փոփոխություն մեր բջիջներից յուրաքանչյուրում:

Միայն պրակտիկայի և անմիջական փորձարարության միջոցով կարելի է աստիճանաբար կատարելագործել գործելու մեր կարողությունը, որը մենք կանվանենք Միստիկա, քանզի Սերն առանց գործերի անհնար է:

ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ:

1. Էակի Ինքնաիրացումը:
2. Մարդկային էակի վերածնումը:
3. Մեր ամբողջ Գիտակցության ազատագրում:
4. Էակի բարձրագույն գոյութենական Մարմինների ստեղծում:
5. Բոլոր Օրենքների Իմացություն:
6. Բարձրագույն Չափումների Իմացություն:
7. Մարմնավորել մեր անհատական Քրիստոսին
8. Հարություն առնել Ինքն Իր մեջ:
9. Հասնել Սրբազան Անհատականության:

Կարդացվում են յոթանասունհինգ գործնական դասախոսություններ՝ ազատ մուտքով և լիովին անվճար, բաշխված գիտելիքի այս չորս սյուների միջև, բոլոր հետաքրքրվողների համար: Հրավիրում ենք Ձեզ հաճախելու մեր սրահներից ցանկացածը:

ՄԵԾԱՐԳՈ ՎԱՐՊԵՏ ՀԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ

ՎԱՐՊԵՏ ՀԻՍՈՒՍԸ ՓՈԽԱՆՑՈՒՄ Է ԱՅՍ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

ՄԵԾԱՐԳՈ ՎԱՐՊԵՏ ԲՈՒԴԴԱ ԳԱՈՒՏԱՄԱ

ՎԱՐՊԵՏ ԲՈՒԴԴԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ Է ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՎԱՐՊԵՏ ՍԱՄԱԵԼ ԱՈՒՆ ՎԵՈՐ։

ՎԱՐՊԵՏ ՍԱՄԱԵԼՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՄ Է ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆԸ։

Դասախոսություն 01-ի ավարտ: